Արձանագրություն N2

ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/73 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

Ք. Երևան,

04.06. 2025թ.

ժամը՝ 17.00

Մասնակցում էին Հանձնաժողովի.

նախագահ՝ Հ. Գրիգորյան

անդամ՝ Ա. Պետրոսյան

անդամ՝ Ն. Պողոսյան

քարտուղար՝ Կ. Դրամբյան

Հանձնաժողովի նիստը վարեց նախագահ՝ Ն. Պողոսյանը

---

1. Ընդունել Ի գիտություն, որ 03.05.2025թ-ին կատարվել է հրավերի պարզաբանման հարցում: Առաջարկվում է հանձնաժողովին ուսումնասիրել հարցումը և տալ Պարզաբանում:

Ուսումնասիրելով պարզաբանման հարցումը Հանձնաժողովը որոշեց տալ հետևյալ Պարզաբանումը.

Հարցադրում 1.

Հարգելի գործընկեր, Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը: 1. Խնդրում եմ նկարագրել պահանջվող անխափան սնուցման սարքին միացվող բեռի տիպը, սարքի անվանումը, հզորությունը: 2. Որքա՞ն ժամանակ է պահանջվում անխափան սնուցման սարքին բեռը սնուցելու համար: 3. Հողանցման շղթայի առկայությունը, բնութագրերը: 4. Տեղադրվող սենյակի չափերը: 5. Անհրաժեշտ 160KW հզորությամբ սարքը հովացնող կոնդիցիոների առկայությունը, դրա բնութագրերը: 6. Եռաֆազ վարդակների առկայությունը սենյակում, մալուխների բնութագրերը սնուցման համար:

Պարզաբանում 1.

Հարգելի հնարավոր մասնակից,

Անխափան սնուցման աղբյուրին նախատեսված է միացնել համակարգչային շերտագրման սարքավորում:

Ինչ վերաբերվում է ՀՇՍ հզորությանը, հողանցման շղթային, տեղադրման սենյակին, օդորակիչին, միացման վարդակներին, ապա դրանք գնման առարկայի բաղկացուցիչ մասեր չեն և պարզաբանման ենթակա չեն: Սնուցման ժամանակի մասին նույնպես պարզաբանում հնարավոր չէ տրամադրել, քանի որ այդ ցուցանիշը փոփոխական է և կախված է բժշկական հետազոտությունից:

Հարցադրում 2.

Հարգելի գործընկեր, Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը: 1) Անխափան սնուցման սարքը պետք է լինի մոդուլայի՞ն, թե՞ մոնոբլոկ: 2) Եթե անխափան սնուցման սարքը մոդուլային է, ապա որքա՞ն պետք է լինի 1 power block-ի հզորությունը: 3) Մարտկոցները պետք է լինեն ներկառուցվա՞ծ անխափան սնուցման սարքի մեջ, թե՞ լինեն առանձին արտաքին պահարանում կամ ստելաժի վրա:

Պարզաբանում 2.

Հարգելի հնարավոր մասնակից

Հրավերի տեխնիկական բնութագրերում ներառված է հետևյալը. <<Պետք է համալրված լինի մարտկոցային մոդուլով>>, ինչը նշանակում է առանձին մոդուլ, հզորությունը արտահայտված է 160KW ցուցանիշով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովը որոշեց հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.		
նախագահ՝		Հ. Գրիգորյան
անդամ՝		Ա. Պետրոսյան
անդամ՝		Ն. Պողոսյան
քարտուղար՝		Կ. Դրամբյան